ARMSWISSBANK
Private & Investment Banking

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2017 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ք.Ժնև

2017 թվականի ապրիլի 25-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր «Էյչ-Վի-Էս Հոլդինգ» ՍՊԸ-ն (11670 ձայնի իրավունքով), ի դեմս «Ա» կարգի մենեջեր Վարտան Սիրմակեսի և «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն (2918 ձայնի իրավունքով), ի դեմս լիազորված անձ Վարտան Սիրմակեսի, որը գործում է 25.04.2016թ. տրված լիազորագրի համաձայն:

Նիստին մասնակցում էր նաև Արդեն Սելլեֆյանը:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 14588) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2016 թվականի շահույթի բաշխման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

ՈՐՈՇԵՑ

<u>Երկրորդ հարցով</u>
(զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)՝

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2016 թվականի ֆինանսական տարվա 3,283,980,000 (երեք միլիարդ երկու հարյուր ութսուներեք միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ զուտ շահույթից 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ դարձնելով այն 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ, իսկ մնացած 2,783,980,000 (երկու միլիարդ յոթ հարյուր ութսուներեք միլիոն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ:

Որոշումն ընդունվեց միաձայն:
Որոշումն ուժի մեջ է մտնում 2017թ. ապրիլի 26-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 25.04. 2017թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 3 (երեք) էջից:

Ժողովի նախագահ՝ /ստորագրություն/ Վ.Միրմակես

Քարտուղար՝/ստորագրություն/ Ա.Սելլեֆյան